

հոռմայեցիները պիտի արշաւեն անհաւատ-  
ներու Տէրութեան վրայ եւ պիտի ձերբա-  
դատեն նաեւ հայերը (4) :

Այս մասին, Կիլիկիոյ Պաշտօնուր Կա-  
թողիկոսը կը գրէր Աղեքսանդր Է. Քահա-  
նայապետին, 15 Սեպտեմբեր 1660ին.  
«...Մեծի փրութեան ակն կալեալ սպասեմք  
լստ կանխասացութեան մարդարէական հոգ-  
ւոյն Մեծին Ներսիսի, զարմին Գրիգորի Լու-  
սաւորչին. զի ի ժամ վախճանի իւրոյ Հողուղ  
Սրբով հրամայեաց զբառնալ թագաւորու-  
թեան Ազգէն Արշակունեաց, եւ զսպառիլ  
Հայրապետութեան ի ցեղէն Սրբոյն Գրիգո-  
րի մեր Լուսաւորչին, եւ տալ այլոց, զգալն  
թաթարին եւ զտիրելն նոցին, նաեւ զստրուկ  
ծառայ լինելն Ազգիս մեր: Իսկ յետոյ եւ  
զազատիլն մեր արիական Ազգէդ Լատինացոց  
Դաղմատեան: Վասն որոյ եւ մեք այն հրա-  
մանին ակն կալեալ յոյս ունիմք եւ հաւատով  
սպասեմք, ըստ Մարգարէին ձայնի. յիշեա՛  
լբան ծառայի, որ եւ ուսացուցեր զիս. ըստ  
այնմ ձայնի եւ մեք որբացեալքս ի տերանց,  
ցրուեալքս եւ վարտեալքս, մեծի հաւա-  
տով յուսամք Ազատարարն Քրիստոս, եւ ակն  
ունիմք նարդեանս, եթէ ձեաւք լինիցի  
փրկութիւն մեր եւ ամենայն քրիստոնէից,  
եւ լինիցի մի հաւատ եւ մի հովիւ...» (5) :

(4) Ամդ, 343 :

(5) Archivio S.C.P.F. Collectanea Diver-  
sarium Provinciarum, Regnorum ac Nationum  
vol. 16, fol. 48r.